



Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՍՐԲԱՆԿԱՐ

18-րդ դարի 40-ականից մինչև 80-ական թվականներին հին Կահիրեի դպտի բազմաթիվ եկեղեցիներն ու վանքերը զարդաբող հայտնի նկարիչ հայազգի Հովհաննես Երուսաղեմացու¹ գործերն ուսումնասիրելիս այդ նույն եկեղեցիներում մենք հանդիպեցինք երեք գեղեցիկ սրբապատկերների, որոնք թվում են, թե չեն պատկանում վերոհիշյալ բազմաթեղուն նկարչի վրձնին:

Այս սրբանկարների երկուսի մասին մենք խոսել ենք 1969 թ. «Սովետական արվեստ» ամսագրում²: Հին Կահիրեի Կասրիյատ եր-

ոհանի (Էլ-Ադարա—Ս. Կույսի) դպտի եկեղեցում են գտնվում դրանք: Առաջինը Մարիամ Աստվածածնա նկարն է, գրկին նստած Հիսուս մանուկը, իսկ երկու կողմերում են գտնվում Հովհաննես Մկրտիչն ու Ջերեդիայի որդի Հակոբը: Հովհաննես Մկրտչի ձեռքում կա մի ձող, որի ծայրից կախված ժապավենի վրա երկաթագիր հալերեն տառերով գրված է հետևյալը՝ «Ապաշխարեցէ զի մերձեալ է արքայութն երկնից» (մեջբերում Ավետարանից, Մատթեոս Գ 2): Նկարի չափերն են 136×118 սմ: Լուսանկարը տեսնել «Սովետական արվեստ»-ում³: Հալերեն այս գրությունը բացահայտ կերպով ցույց է տալիս, որ սույն նկարը գործն է մի հայ նկարչի:

Նույն եկեղեցում է գտնվում մի ուրիշ սրբանկար, որ նույնպես ներկայացնում է Մարիամ Աստվածածնին, որի գրկին բազմած է Հիսուս մանուկը, իսկ երկու կողմերում կա մեկական հրեշտակ: Նկարը թեպետև որևէ գրություն չունի վրան, սակայն նմանության շատ գծեր ունի նախորդ սրբանկարի հետ, և թվում է թե հայազգի նույն նկարչի գործն է: Այս երկրորդ նկարի չափերն ավելի փոքր են՝ 83×69,5 սմ:

¹ Նրա մասին տեսնել մեր հետևյալ հոդվածները՝ «Նկարիչ Հովհաննես Երուսաղեմացին Եգիպտոսում» («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1967, № 2—3 (37—38), էջ 287—276), «Հովհաննես Երուսաղեմացու նկարների ցուցակը» (նույն տեղում, 1968, № 3 (42), էջ 277—289), «Անունը՝ Հովհաննես, ազգանունն անհայտ է» («Գարուն» ամսագիր, Երևան, 1968, № 8, էջ 50—54):

² «Երկու նկար դպտի եկեղեցուց» («Սովետական արվեստ», Երևան, 1969, № 4, էջ 53—56): Հետագայում լույս տեսան նաև սփյուռքահայ հետևյալ թերթերում՝ «Հուսարեր» (Կահիրե), 21 և 22 հուլիսի 1969 թ., «Այգ» (Բեյրութ), 8 և 9 օգոստոսի 1969 թ. և «Արև» (Կահիրե), 25 և 26 մարտի 1970 թ.:

³ «Սովետական արվեստ», 1969, № 4, էջ 54:

Լուսանկարը տեսնել «Սովետական արվեստ»-ում⁴:

Այս երկու արքանկարների ոճը բոլորովին տարբերվում է Հովհաննես Երուսաղեմացու ոճից: Մենք գտել էինք, որ դրանք հմանվում են ավելի 1723—24 թվականներին Երուսաղեմում նկարված 23 մեծադիր նկարների հեղինակ տիրացու Հովհաննեսի ունեն: Հանգուցյալ Գարեգին կաթողիկոսն արժեքավոր մի հոդված ունի այս նկարչի և նրա գործի մասին⁵:

Այսօր սույն հոդվածը նվիրվում է դպտի եկեղեցում գտնվող երրորդ նկարի ուսումնասիրությանը:

Հին Կահիրեի դպտի մի ուրիշ եկեղեցում (Ս. Վառվառայի—Սիտտ Բարբարա կոչեցյալ), որ հեռու չէ նախորդ Կասրիյաս Էր-Ռիհանիի եկեղեցուց, գտնվում է մի մեծ արքանկար, որի անունը տրված է դպտի արվեստի մասնագետ Մարկոս Սիմայկա փաշայի կողմից այսպես՝ Le massaere des enfants de Bethléem, այսինքն՝ Բեթլեհեմի մանուկների կոտորածը⁶: Սույն նկարը տեղադրված է եկեղեցու ներսում, հյուսիս-արևմտյան պատի վրա, եկեղեցու մուտքի գլխավոր դռան և ձախակողմյան փակ դռան մեջտեղը: Չափերն են՝ 113×76,5 սմ:

Նկարի ներքևի կեսը ներկայացնում է Բեթլեհեմի մանուկների ջարդը: Բեթլեհեմը հին Պաղեստինի այն քաղաքն էր, ուր ծնվել էր Քրիստոս և ուր հռոմեական տիրապետության ժամանակ, մեր թվագրության սկզբին, տեղի էր ունեցել նորածին հրեա երեխաների կոտորածը: Սույն արժեքավոր նկարը ներկայացնում է այդ սպանդի պատկերը: Նկարի կեսին երևում են հռոմեացի երեք զինվորներ, որոնց երկուսը ձեռքում ունեն բարակ երկար սրեր, և որոնք կոտորում են կիսամերկ կամ բոլորովին մերկ մանուկներին: Նկարում երևում են թվով 13 մանուկներ, որոնց մեկ մասը վիրավորված է, իսկ մյուս մասն էլ արդեն մեռած: Վերքերից հոսում է արյունը: Երեվում են 1—2 մանուկներ, որոնք տակավին ողջ են և չեն վիրավորված: Նկարի ձախին

կան կիսամերկ երկու զարհուրած մայրեր և մի հատ էլ աջակողմյան մասում, որոնք աշխատում են հռոմեացի զինվորների ձեռքից ազատել իրենց զավակներին: Զինվորները կատաղած երևույթ ունեն, կրում են մորուք և պեխ, իսկ իրենց գլխին էլ ունեն հռոմեական զինվորական սաղավարտը:

Նկարի աջին, ներքևից ճիշտ 20 սմ դեպի վերև, երկու սանտիմետր բարձրությամբ, մետրայան մեծ երկաթագրով երևում են հայերեն երեք բառեր՝ «Կոտորումն սբ. մանկանց», որոնց ընդհանուր երկարությունն է 16,5 սմ: Գրերը գրված են սպիտակ ներկով, սրճագույն ֆոնի վրա, որոշապես ընթեռնելի և հստակ կերպով տեսանելի: Որոշ տառեր գրված են կապ-գրերով, այսպես միացված են Կ-Ո, Ո-Ի, Ս-Բ, Կ-Ա:

Սույն տողի սկզբում, «Կոտորումն» բառից առաջ, ժամանակին եղել է մի բառ, իսկ տողի ներքևում էլ՝ մի քանի բառեր, որոնք պետք է հայերեն եղած լինեին, և որոնք այժմ արքված են և անտեսանելի: Այդտեղ մնացած են գրերի մնացվող մի շարք սպիտակ հետքեր միայն:

Նկարի ներքևում, ճիշտ մեջտեղը, արյունը վիճակում գետնին պատկած է մի փոքր մերկ տղա (թվում է, թե մեռած է արդեն), վզից և ձախ կողից վիրավոր: Ա. Հստակ կերպով երևում է, որ տղայի վերելում ժամանակին եղած է երկու տող հայերեն գրություն (վերևի տողը 26 սմ, իսկ ներքևինը 20 սմ երկարությամբ): Բ. Սույն տղայի ներքևում էլ թվում է, թե եղել է երկու տողով մի ուրիշ ավելի կարճ գրություն (վերևինը՝ 13 սմ և ներքևինը՝ 11 սմ երկարությամբ): Գ. Կենտրոնից դեպի մի քիչ աջակողմ 5 սմ երկարությամբ մի ուրիշ գրություն ևս ժամանակին եղած կլլի:

Ներկայիս սակայն, սույն երեք (Ա, Բ, Գ) գրություններն էլ բոլորովին արքված և անընթեռնելի են դարձած: Հստակ կերպով երևում է, որ ժամանակին այդտեղ բառեր եղած պետք է լինեին, այն էլ անպայման հայերեն: «Ա» տառը մի քանի տեղեր երևում է անորոշ կերպով: Վերոհիշյալ երեք տեղերն էլ արքված են, սկզբնական տառերի սպիտակ ներկն էլ տարածված լինելով այսպես աջ ու ձախ: Ուշադիր դիտողի համար հայտնի է դառնում, որ այդ բառերը դիտավորյալ կերպով արքված և ավերված են չարագործ մի ձեռքի կողմից, տեղերն էլ մաքրված և հավասարեցված ֆոնի հետ: Ամենայն հավանականությամբ այդտեղ գրված պետք է լինեին հայերեն լեզվով նկարչի անունը, նկարի թվականը, հիշատակարան և այլ շատ կարևոր տեղեկու-

⁴ Սույն տեղում, էջ 55:

⁵ Սույն տեղում:

⁶ «Հասկ» հաշագիտական տարեգիրք, Գ տարի, Անթիլիաս, 1957, էջ 26—52: Գարեգին կթղ. Հովսեփյանի մույն հոդվածն առաջին անգամ, քիչ փոփոխությամբ, լույս է տեսել 40 տարի առաջ, Գարեգին Առնյանի «Գեղարուեստ» պատկերագրող հանդեսում, Թիֆլիս, 1917, հատոր 6, էջ 45—55:

⁷ Marcus H. Simalka Pacha, Guide sommaire du Musée Copte et des principales églises du Caire, Le Caire, 1937, page 69.

թյուններ, որոնք այսօր դժբախտաբար առհավետ ջնջված են մեզ համար: Եթե հետագայում ճարտար ձեռքերի շնորհիվ զանազան դեղերով և մուրք ֆոտոնկարչության միջոցներով կարելի լիներ վերականգնել սրբված այդ տողերի բնագիրը, վստահ ենք, թե կարելի կլիներ ձեռք բերել շատ արժեքավոր տեղեկություններ հայ արվեստի, հատկապես 18-րդ դարի պատմության համար:

Նկարի վերևի մասի ձախակողմում էլ երեւում է երեք հարկանի մի շենք, արձագույն, և սպիտակ դարաստաի, որի մոտ երեւում են միգակավոր և հեծյալ մի քանի հոռմեացի զինվորներ, նախորդ գործերից շատ ավելի փոքր չափով նկարված: Գլխավորում են կամ ծածանվող վեց դրոշներ և բազմաթիվ՝ միգակներ էլ օղում:

Վերևի մասի կենտրոնում և աջակողմյանն երևում են մի քանի ուրիշ զինվորներ, որոնք արով կամ դաշույնով կոտորում են մի քանի փոքր տղաների: Հորիզոնը դեղնորակ է ներկված, իսկ երկինքն էլ՝ կանաչ:

Վերևում, նկարի աջակողմյանը, մի տուն է երևում, որտեղից բազմաթիվ աղավաղներ, կատարվող սպանդից զարհուրած, դեպի երկինք են փախչում: Կենտրոնում կան երկու ծառեր կողք-կողքի, իսկ նկարի աջակողմյան ամենավերևի անկյունում էլ սպիտակ ամպերի մեջ կանգնած է տխուր դիմագծով մի կին, որ շատ հավանաբար Մարիամը պետք է լինի:

Նկարն ունի փայտյա շատ հասարակ շրջանակ, որի աջակողմյան և ներքևի մասը կտրած ու ընկած է: Ընդհանուր նկարը մուգ գույնի է, իսկ ամբողջ երեսին էլ քաված է մի փայլ, որով ամբողջ նկարը փայլում է, և մնա՞ն չէ տվորակյան նկարներից: Պատկերը սկզբում նկարված է կտավի վրա ու հետագայում ամրացված փայտյա տախտակի երեսին:

Սույն պատկերը շատ գեղեցիկ մի նկար է, գործը՝ 18-րդ դարի մի տաղանդավոր հայ նկարչի, որ տարբեր արվեստի և ոճի տեղ էր, քան Հովհաննես Երուսաղեմացին (Յուհաննա-Հաննա): Այս վերջինս մույն ս. վառվառայի և դպտի այլ եկեղեցիներում ու վանքերում ունի ներկայիս բազմաթիվ արքայապատկերներ, որոնց ոճը և արվեստը հիմնովին տարբերվում են վերոհիշյալ նկարից: «Բեթղեհեմի մանուկների կոտորածը» նկարը կրում է նկարչության վերածնունդյան դասական ոճի մեծ ազդեցություն և իր արվեստով մոտենում է եվրոպական 17—18-րդ դարերի նկարչական ոճին: Սույն նկարում արտահայտված կերպարները, ինչպես հոռմեացի զազազած զինվորները, զարհուրած մայրերը, սպանված և կամ դեռ

կենդանի երեխաները, թվում է, թե գործն են մի եվրոպացու վարձ վրձնի: Փաստն այն է սակայն, որ հայ նկարչի վրձինը կա՛մ կրել է եվրոպական ազդեցությունը, և կա՛մ մի շատ գեղեցիկ վերարտադրություն է կատարել նրան նախորդող նկարիչներից մեկին:

Մեր կարծիքով սույն նկարը կրում է վեներտիկցի հայտնի նկարիչ Ջիովաննի Բաթիստա Թիեպոլոյի (1696—1770 թթ.) ազդեցությունը⁸, մի նկարիչ, որ «մասամբ հաջորդը նկատված է Վերոնեզեի, հղացումի տեսակետով, իտալական 18-րդ դարու ամենեւն աչքառու, բեղմնավոր, հորդաւատ արվեստագետն է, որ կլեցնէ աշխարհը իր երկերով և ունի, միաժամանակ, մեծ ազդեցություն մը զանազան երկիրներու այլ արվեստագետներուն վրա»⁹:

Այժմ տեսնենք, թե սույն նկարն ո՛ւմ գործն է, ե՞րբ է նկարվել և ինչպե՞ս է անցել դպտի եկեղեցուն:

Ո՞վ է հեղինակը.—Առանց որևէ տարակույսի կարելի է ասել, որ այս արքայապատկերը նկարված է մի հայ նկարչի կողմից, որ շնորհալի և տաղանդավոր արվեստագետ պետք է եղած լիներ: Նկարի վրայի հայերեն գրությունն ապացուցում է հատակ կերպով, որ այն պատվիրված է եղել հայկական եկեղեցու համար, հայերի կողմից օգտագործվելու և ոչ թե դպտիների համար, որովհետև եթե պատկերը դպտիների կողմից եղած լիներ, նկարիչը վրան անպայման արաբերեն և մույնիսկ դպտերեն գրած պիտի լիներ: Այս մասին համոզվելու համար պետք է դիտել հին Կահիրեի դպտի բոլոր եկեղեցիների և վանքերի խորաններն ու պատերը, որոնք զարդարված են բազմահարյուր արքայապատկերներով, և որոնք գործերն են հայ, հույն և դպտի նկարիչների, ինչպես օրինակ հայազգի Հովհաննես Երուսաղեմացին, հույն Աստասի Էր-Ռումին և այլն: Սրանց բոլոր նկարների հիշատակարանները գրված են արաբերենով (որովհետև 16-րդ դարից սկսյալ դպտիները կորցրել էին իրենց մայրենի լեզուն և գրում ու խոսում էին արաբերեն), միայն շատ քչերի վրա, այն էլ մեծ մասամբ դպտիների կողմից նկարվածները, ունեն դպտի լեզվով գրություններ (սրբերի անունները և կարճ արձանագրություններ միայն): Ոչ մեկի վրա

⁸ Шугин В. Всеобщая история искусств, том четвертый, искусство 17—18 веков, Москва, 1963, стр. 238—243, Джованни Батиста Тьеполо.

⁹ Բոլաղյան Ալիս, «Ճ. Մ. Թիեպոլո» (Նկարչի ծննդյան 275-ամյակին առթիվ), տեսնել «Նոր կյանք» շաբաթաթերթ, Բուխարեստ, № 12 (1078), 26 մարտի 1971 թ., էջ 3:

հայերեն կամ հունարեն արձանագրություն չկա, քանի որ այս երկու լեզուները բոլորովին անհասկանալի էին դպտիկների համար: Եթե այդ օտարազգի (հայ և հույն) գլխարկները մի որևէ տեղ թողել են իրենց մայրենի լեզվով մի որևէ արձանագրություն, դա կատարվել է բացառության կարգով, որովհետև այդ գրությունը բոլորովին անհասկանալի և անընթեռնելի է եղել բնիկ



ծողովրդի, տվյալ դեպքում Եգիպտոսի հնադարյան բնակիչ դպտի ծողովրդի կողմից:

Մենք գտնում ենք, որ սույն գլխարի հեղինակն է տիրացու Հովհաննես Ակարիչը, որ Ակարել է շուրջ երկու տասնամյակ առաջ, քան Կահիրեում գործող Հովհաննես Երուսաղեմացին (այլ անվամբ Յուհաննա կամ Հաննա) և ապրել ու գործել է հենց Երուսաղեմում: Հայկական մանրանկարչության մեծագույն մասնագետ Գարեգին կաթողիկոսը վերևում նշված իր հոդվածում մանրամասն խոսում է և արժանիքները վեր հանում հիշյալ Ակարչի, տալով նրա գործերի արդար գնահատականն և բազմաթիվ ֆոտոպատճենները, շատ գեղեցիկ սրբապատկերներ, որոնք այսօր իսկ գոյություն ունեն Երուսաղեմի հայոց վանքում:

18-րդ դարի սկզբում Երուսաղեմի հայոց վանքը ճնշված էր «լեռնակուտակ» պարտքերի տակ: 1715 թ. պատրիարք է ընտրվում Գրիգոր Շղթայակիրը, խելացի մի մարդ, որ հօգուտ իր Աթոռին հանգանակություն կատարելուց հետո, 1717 թ. ժամա-

նում է Երուսաղեմ և սկսում նոր էջ բանավանքի պատմության մեջ, դատնալով նրա մեծագույն բարերարը¹⁰: Նա մարում է պարտքերը, նորոգում շենքերը, գնում նոր կազվածներ, շենացնում վանքը, անցկացնում ներքին և արտաքին բարեկարգումներ, բազմացնում միաբանությունը¹¹ և վերջապես ձեռնարկում է եկեղեցու պատերը զարդարել նոր սրբապատկերներով: Գարեգին կաթողիկոսն իր հոդվածում Շղթայակիրի ընտրությունը դնում է 1717-ին և գահակալությունն էլ՝ 1721-ին¹²:

Երուսաղեմի հայոց վանքի տաճարի պատերից կախված կան բազմաթիվ սրբապատկերներ, որոնցից 23 տերունական մեծադիր պատկերները «խորին ուշադրության արժանի» են, գրում է հոդվածի հեղինակը: Սրանք բոլորն էլ պատկանում են վարպետ Ակարիչ տիրացու Հովհաննեսին: Սույն Ակարների վրա պահպանված հայերեն երկաթագրով գրված հիշատակարանները ուրոշ հատակ տեղեկություններ են տալիս մեր Ակարչի, Գր. Շղթայակիրի, պատվիրատուների և թվականի մասին: Պարզվում է, որ այդ 23 սրբապատկերները Ակարված են բոլորն էլ Շղթայակիրի օրով, 1723—24 թվականներին¹³:

Ինչո՞ւ այս Ակարի հեղինակը տիրացու Հովհաննեսն է.—

1. Ուսումնասիրվող այս Ակարի ոճն ու արվեստը շատ մոտիկ են տիրացու Հովհաննեսի ոճին ու արվեստին: Հայտնի կերպով տարբերվում է Հովհաննես Երուսաղեմացու Ակարներից:

2. Նկարի չափերը մեծ են,* ինչպես Երուսաղեմի 23 սրբապատկերները, մինչդեռ Հովհաննես Երուսաղեմացու Ակարներն ավելի փոքր են:

3. Հովհաննես Երուսաղեմացին մեզ ծանոթ իր 324 Ակարների մեջ երկուսում միայն հայերեն տառեր ունի գրած, որոնք նոսրգրեր են, իսկ վերոհիշյալ սրբապատկերում եղած հայերեն գրությունը գրված է մետրոպայան մեծ երկաթագրերով, որոնք շատ մեծ են տիրացու Հովհաննեսի՝ Երուսաղեմի վանքի տաճարում ունեցած 23 մեծ

¹⁰ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 690:

¹¹ Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հատոր Բ, Կ. Պոլիս, 1912, էջ 2812—14, 2824—25, 2863—64:

¹² Նշված հոդվածը, էջ 27:

¹³ Նշված հոդվածը, էջ 27, տեսնել Սիմոն Սիմոնյանի երկու աստղանիշ կրող տողատակի ծանոթագրությունը:

Ակարների հայկական տառերին:

4. Հովհաննես Երուսաղեմացու ամենամեծ պատկերների ֆոնն ու երկինքը Ակարված են ոսկեգույն, մինչդեռ այս Ակարի երկինքը բաց կանաչ է: Այս ֆոնն ավելի մոտենում է տիրացու Հովհաննեսի Ակարների ֆոնին, քան թե Հովհաննես Երուսաղեմացու օգտագործած գույնին:

5. Այս պատկերում Ակարված անձերը բոլորն էլ անխտիր մաքուր հայկական տիպեր են, մինչդեռ Հովհաննես Երուսաղեմացու սրբապատկերներում այսքան շեշտված չէ հայկական տիպը, տեղ-տեղ երևում է մուլմիսկ դպտի դիմագիծը:

Այս բոլորը Ակատի առնելով, ինչպես նաև Ակարի հայերեն երկաթագիր գրությունն ուսումնասիրելով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ այս պատկերի հեղինակը պետք է լինի տիրացու Հովհաննես Ակարիչը:

Նկարի թվականը և տիրացու Հովհաննեսը.—Նկարի թվականն անպայման պետք է հիշված լինեք նախապես, սակայն, ինչպես ցույց տրվեց վերևում, սրբապատկերի վրա մի քանի տեղ եղած հայերեն գրությունները ջնջված և սրբված են, որով անհայտ է այժմ ճշգրիտ թվականը: Նկարի հեղինակն է տիրացու Հովհաննեսը, որ գործել է Երուսաղեմում 1723—24 թվականներին, ումից այսօր այդ քաղաքի հայոց վանքի տաճարում մենք ունենք 23 մեծադիր կտավներ, տերունական Ակարներով:

Այս մեծ Ակարները տեղադրված են հայկական տաճարի հարավային, արևմտյան և հյուսիսային պատերի վրա: Գարեգին կաթողիկոսի համարակալած պայմանական թվերով տեսնում ենք, որ հարավային պատի վրա կան 10 Ակարներ (ՁՁՁ 1—10), արևմտյան պատի վրա՝ 5 Ակարներ (ՁՁՁ 11—15), իսկ հյուսիսային պատի վրա՝ 8 Ակարներ (ՁՁՁ 16—23): Հեղինակն իր առումը թողել է միայն հինգ Ակարների վրա (ՁՁՁ 1, 14, 15, 22 և 23), որոնցից ՁՁ 15 Ակարինը (Հիսուսի խաչելությունը և առաքյալների նահատակությունները) գրված է այսպես. «...Ակ(ա)րեցա ձեռ(ա)մք տիրացու Յվնէի» (փակագրով)¹⁴: Տիրացու Հովհաննեսն անկասկած Ակարած է այլ պատկերներ ևս, ինչպես Մարիամ Աստվածածնա երկու Ակարները (տեսնել «Սուլետական արվեստ» ամսագիրը) և Բեթլեհեմի մանուկների կոտորածը:

Մեր կարծիքով, խնդրո առարկա այս պատկերը կա՛մ պետք է Ակարված լինեք

1723—24 թվականներին Երուսաղեմում և ապա տեղափոխված Կահիրե, տեղվույն հայոց եկեղեցու օգտագործման համար, և կա՛մ 1723-ից առաջ կա՛մ 1724-ից հետո, Կահիրեում կա՛մ Երուսաղեմում: Ընդարձակելով այդ սահմանագիծը, կարելի է ավելի ապահով կերպով ասել, որ դրա թվականը կարելի է դնել 18-րդ դարի առաջին կեսում, որի կենտրոնն ունենալով միշտ 1723—24 թվերը, տիրացու Հովհաննեսի Երուսաղեմում ունեցած բեղմնավոր գործունեության առանցքի ճշգրիտ երկու տարիները:

Նկարն ինչպե՛ս պետք է անցած լինեք դպտիներին.—Միջին դարերում (11—12-րդ դարերում) հայերը Եփրատի զանազան վայրերում ունեին շուրջ երեսուն վանքեր և եկեղեցիներ, որոնց մասին մանրամասն կերպով խոսում է Աբուսահլ (Աբու Սալիհ) հայագգի պատմագիրը: Հետագայում կոիվների, պատերազմների և հալածանքների պատճառով, հայերի մի մասը կոտորվեց, մյուսն անցավ այլ երկրներ, և մնացած հայկական գաղութն էլ նորանալով, հայկական աղոթավայրերի թիվն իջավ նվազագույնի, մուլմիսկ 15—16-րդ դարերում այլևս հայոց եկեղեցին բոլորովին չհիշվելու առիճան: Ավելի ուշ շրջանում, երբ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Եփրատում, երկրում մնացած հայկական գաղութը մտածում էր մի աղոթատեղի ունենալու մասին մայրաքաղաքում, ուր ապրում էին երկրի հայերի մեծ մասը: Գոյություն ունեցող հայկական մի քանի խաչքարերը ցույց են տալիս, որ արդեն 18-րդ դարում հայերը պետք է գոնե մի եկեղեցի ունեցած լինեին Կահիրեում¹⁵: Պատմիչ Հաննա Երուսաղեմացին 1727 թվին իր գրած Երուսաղեմի պատմության մեջ (որ հետագայում 1731 թ. լույս տեսավ Կ. Պոլսում) խոսում է Երուսաղեմում Քրիստոսի գերեզմանի արտաքին մասում Հեթում թագավորի շինել տված մի պատարագամատույց սեղանի մասին, որ տրվել է դպտի եկեղեցուն, որի փոխարեն դպտիներն էլ մի եկեղեցի են տվել հայերին Կահիրեում¹⁶: Իսկ Աստվածատուր պատմագրի ավելի ուշ շրջանում գրած Երուսաղեմի ժամանակագրական պատմության մեջ (լույս տեսած 1890 թ. Երուսաղեմում, Բ հատոր, էջ 505) դպտիների տված եկեղեցին հիշվում է որպես ս. Սարգիս եկեղեցին, որ հետագայում շինված հայոց Բեյն էլ-Սուրենի եկեղեցու մոտերը գտնվող Հարեթ էլ-Չուելայի դպտի

¹⁴ Տեսնել Գարեգին կաթողիկոսի նշված հոդվածը, էջ 45:

¹⁵ Թ(որգոմ) և(պիսկոպոս) Գ(ուշակյան), Եփրատի հայոց հին և արդի եկեղեցիները, Կահիրե, 1927, էջ 28—31:

¹⁶ Նույն տեղում, էջ 28:

վանքի տանգիքի վրա կառուցված մի վեր-
նահարկ մատուռ էր, որ հայերի սեփական-
ատույնն է եղել մինչև 1886 թ.¹⁷։ Սույն
եկեղեցին շատ հավանաբար հայերին
պատկանելիս է եղել 1851 թ. կամ ավելի
առաջ, որովհետև հետագա այցելուները հի-
շում են եկեղեցին որպես հայերի սեփական-
ատույնը, մուսուլման 1651—82 թվականնե-
րին պատկանող հայերեն արձանագրու-
թյուններ է տեսել այդ եկեղեցում, 1876 թ.
այդտեղ այցելող Հմայակ վարդապետ Դի-
մաքյանը¹⁸։

Առանց ավելի մանրամասնությունների
մեջ մտնելու տեսնում ենք, որ Կահիրեի
հայերը 17-րդ դարի կեսերից մինչև 19-րդ
դարի Բ հիսնամյակի կեսերը (մոտավո-
րապես 1650—1875 թթ.) ունեցել են մի ե-
կեղեցի ու Սարգիս անունով, որ գտնվելիս
է եղել Հարեթ Էլ-Ջուելայի դպտի վանքի
վերահարկում։ 19-րդ դարի սկզբներին
Կահիրեի հայկական գաղութն աճելով և
բազմանալով, պահանջ է զգացվում մի նոր
և ավելի մեծ եկեղեցու։ Որով ու Սարգիս
եկեղեցու անմիջական շրջակայքում 1839 թ.
կառուցվում է ու. Աստվածածին եկեղեցին¹⁹,
որից հետո ու. Սարգիս փոքր մատուռը
կորցնում է իր կարևորությունը և վերջապես
լքվում է 1886 թ., վերջնականապես տրվե-
լով դպտիներին, իր իսկական նախնական
տիրոջը։ Վերոհիշյալ նկարը, ինչպես նաև
Կասրիյատ Էր-Ռիհանի եկեղեցում գտնվող
Աստվածամոր երկու սրբանկարները հա-
յերից պետք է դպտիների ձեռքն անցած
լինեին 1886-ին կամ ավելի առաջ, զմեռն,
փոխանակության և կամ մի այլ միջոցով,
մի բան, որ անհայտ է մեզ համար, քանի որ
մեր ունեցած աղբյուրները լրում են այս մա-
սին։

Սակայն մենք ենթադրում ենք, որ վերո-
հիշյալ երեք հայկական նկարները պետք է
հայերից դպտիներին անցած լինեին ան-
պայման 1889 թվականից առաջ, որովհետև
այդ թվականին արդեն հայերն ունենալով
մի նոր եկեղեցի, այն էլ ու. Կույսի անվան
նկիրված, ամենայն հավանականությամբ
այդ նկարները տեղափոխած կլինեին իրենց
նոր ու. Աստվածածին եկեղեցին։

1749 թվականին Կահիրեում գործում էր
Հովհաննես Երուսաղեմացի արվեստագե-
տը, որ 1745—55 թթ. մի ուրիշ նկարիչ,
դպտի Իբրահիմ Էլ-Նասիլիսի հետ նկարում
էր բազմաթիվ սրբապատկերներ դպտի ե-

կեղեցիների և վանքերի համար։ Հովհան-
նես Երուսաղեմացու ոճն ու արվեստը չեն
համապատասխանում հայկական վերոհիշ-
յալ երեք նկարների ոճին ու արվեստին, ո-
րով մենք ավելի հակված ենք ենթադրելու,
որ ամենայն հավանականությամբ այս երեք
կտավները պետք է նկարված լինեին
1723—24 թթ., մի քիչ առաջ և կամ մի քիչ
հետո, Երուսաղեմում գործող մի ուրիշ
հայտնի նկարիչ տիրացու Հովհաննեսի
կողմից։ Ծատ հավանաբար այս նկարները
Երուսաղեմից Կահիրե են բերված ուխտա-
վորների կամ այցելուների միջոցով, նկա-
տի առնելով, որ Եգիպտոսից շատ հայեր
էին գնում Պաղեստին որպես ուխտավոր,
Քրիստոսի գերեզմանը և այլ վայրերը տես-
նելու համար։

Եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ եպս.
Գուշակյանը և բանասեր Արտաշես Գար-
տաշյանն իրենց գրքերում, խոսելով ու. Սար-
գիս եկեղեցու մասին, նշում են, որ այն
հիմնական նորոգության է ենթարկվել
1749 թ. «տարապահանքի Այվազ աղա կո-
չեցյալ Վահան աղայի» քարերարությամբ,
իսկ ապա Գարտաշյանը տալիս է հետևյալ
հետաքրքիր տեղեկությունը. «Կամարա-
կապի Վահան աղա Գրիգորյան ոչ միայն
վերանորոգած էր ի հիման (խոսելով ու.
Սարգիս եկեղեցու մասին—Ն. Տ. Մ.) ...
այլ զբաղած է նաև անոր ներքին կահավո-
րումով, նվիրելով ազնիվ փայտե խորան մը
խորաքանդակ ծաղիկներով և հիշատակա-
րաններով, ինչպես նաև միջակ մեծությամբ
և արվեստի նույն նրբությամբ շրջանակյալ
պատկերները ու. Աստվածածնա և ու. Հա-
կոբա որոնք այժմ կգտնվին ու. Գրիգոր Լու-
սավորիչ եկեղեցվո մեջ»²⁰, և ապա քիչ հե-
տո հիշելով ու. Սարգիս եկեղեցու խորանի
նկարների և երեք այլ նկարների շրջանակ-
ների հիշատակարանները, տալիս է դրանց
բովանդակությունը։ Այսպես մի սրբապատ-
կերի շրջանակի վրա կա հետևյալ արձա-
նագրությունը. «Յիշատակ է ու. Աստուա-
ծածնայ պատկերս, լիկնայ գիղէն, Կամա-
րակապի Գրիգոր և Վահան աղայից»²¹։
Ոչինչ չի ասվում ու. Աստվածածնի (այսին-
քն ու. Կույսի—Ն. Տ. Մ.) նկարի մասին։
Դժբախտաբար գրված չեն շրջանակի չա-
փերը, որպեսզի իմանայինք, թե համապա-
տասխանում են արդյոք մեր նկարի 136×
118 սմ չափերին։

**Գնահատականներ տիրացու Հովհաննե-
սի մասին.**—Սույն նկարչի մասին առաջինը
գրում է ժամանակակից Հաննա պատմա-
գիրն իր գրքում, որ կոչվում է «Գիրք

¹⁷ Արտաշես Գարտաշյան, Նյութեր Եգիպտոսի
հայոց պատմության համար, Կահիրե, 1943, էջ 16։

¹⁸ Նույն տեղում, էջ 14։

¹⁹ 1960-ական թվականներին այս եկեղեցին ևս
քանդվեց, սլանի տակ ընկնելու հետևանքով։

²⁰ Նույն տեղում, էջ 15։

²¹ Նույն տեղում, էջ 16։

պատմության արքայ և մեծի քաղաքին Աստուծոյ՝ Երուսաղէմի, և արքոց տնօրինականաց տեղեաց» (Յովհաննէս Հաննա վարդ. Գործակալ վերաձայնեալ, Կոստանդնուպոլիս, 1731): Խոսելով տիրացու Հովհաննէսի Երուսաղէմի նկարների մասին գրում է հետևյալը. «Եւ նկարեաց ի մէջ Սրբոյն, Յակոբայ գտէրունական պատկերս, տնօրինականացն Քրիստոսի և արքոց նորին, հրաշագեղ արուեստագործութեամբ»: Նույն հեղինակը մի այլ տեղ էլ գրում է. «...և նկարեցոյց շուրջանակի ի մէջ սուրբ Յակոբայ գտէրունական պատկերս տնօրինականաց և արքոցն Աստուծոյ՝ արհեստապետ պատկերահանութեամբ»²²:

Երուսաղէմի պատմագիր Տիգրան Սավալանյանցն իր գրքում, նշելով Շղթայակրի նորոգությունների և վերոհիշյալ նկարների մասին, 1872 թ. գրում է հետևյալը. «Այս ամէն պատկերները նկարուած են ճարտար պատկերահան տիրացու Յովհաննէսի ձեռքով»²³:

Հայ արվեստի բազմահմուտ մասնագետ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը իր նշված հոդվածում գովասանական բազմաթիվ տողեր ունի տիրացու Հովհաննէսի թողած ժառանգության վերաբերյալ: Երբ նա առաջին անգամ, 1911 թ., հայտնի նկարիչ Եղիշէ Թադևոսյանի հետ այցելում է Երուսաղէմի հայոց վանքը, այս մասին նա գրում է հետագայում. «...հալիշտակված էինք տաճարի վերին շարքի հսկայական մեծությամբ և գեղարվեստական արժանավորությամբ տնօրինական պատկերներով»²⁴: Հեղինակը խոսելով Շղթայակրի մատուցած մեծ ծառայության մասին գրում է հետևյալը. «Գրիգոր Շղթայակրի գործունեությունը մեծ էր և բազմատեսակ Երուսաղէմի Աթոռի բարեկարգության և ապագա բարգավաճման համար, բայց, եթե ոչինչ էլ արած չլիներ նա, հայ պատկերագրության համար նորա գործադրած ջանքերը բավական են նորա անունը անմահացնելու հայ եկեղեցական արվեստի պատմության լուսավոր էջերում»²⁵: Որով պայտես անուղղակի կերպով նա մի անգամ ևս գովում է տիրացու Հովհաննէսին, որովհետև սրա նկարները շատ պատվավոր տեղ ունեն Շղթայակրի օրով Երուսաղէմի հայոց տաճարի պատերը զարդարող բոլոր նկարներում: Օրվա պատրիարք Շղթայակրին ուղղված գովա-

սանական խոսքերի մեծ մասը բաժին է ընկնում անտարակույս տիրացու Հովհաննէս նկարչին, նկատի ունենալով անշուշտ 1723—24 թթ. նկարած իր մեծածավալ սլոբապատկերները:

Գարեգին կաթողիկոսն ապա նշում է, որ նույն վանքում տիրացու Հովհաննէսի վերոհիշյալ 23 նկարների կողքին կան նույն ժամանակաշրջանի այլ պատկերներ ևս «որոնք համեմատաբար շատ թույլ են իրենց գեղարվեստական արժեքով և երբեք տիրացու Հովհաննէսի վրձինի գործ լինել չեն կարող... հավանորեն նրա օգնականների կամ աշակերտների գործեր են»: Իսկ ակնարկելով տիրացու Հովհաննէսին, հեղինակը գրում է. «...այստեղ գործ ունենք մի տաղանդավոր նկարչի հետ, մասամբ ազդված եվրոպական՝ հատկապես իտալական արվեստից»²⁶:

Հայտնի նկարիչ և արվեստաբան Օճնիկ Ավետիսյանն իր արժեքավոր ֆրանսերեն գրքում, «Հայ նկարիչներ և քանդակագործներ» վերնագրով, շատ քիչ տեղ է տալիս տիրացու Հովհաննէսի գործի և ստեղծագործության մասին և անցնում է թուրքիկ կերպով: Հիմնականում կրկնելով Գարեգին կաթողիկոսի գնահատականը, նա ևս Հովհաննէսին համարում է տաղանդավոր մի նկարիչ, որ, որոշ չափով ազդված պետք է լինի եվրոպական արվեստից: Ավետիսյանն արդարացի կերպով գտնում է, որ Հովհաննէսի արվեստը որոշ կապ ունի հայկական ավանդական մանրանկարչության և եկեղեցական նկարչության հետ: «Իդեալիզմը թվում է լինել այս նկարչի գլխավոր հատկությունը: Դիմագծերը դրոշմված են մի ազնիվ և պարզ արտահայտությամբ: Կեցվածքներն և բնական ու կենդանի շարժումները, վայելչորեն հարդարված զգեստները, թելադրում են կերպարների և իրենց հոգեկան վիճակների միջև գոյություն ունեցող մի կատարյալ հաղորդություն»²⁷:

Ամփոփելով մեր հոդվածը հին Կահիրեի ս. Վառվառայի (Սիտո Բարբարա) դպրոհ եկեղեցում գտնվող հայկական այս արժեքավոր սրբանկարի մասին, կարելի է ասել, որ դրա հեղինակը տիրացու Հովհաննէսն է, մի տաղանդավոր նկարիչ, որ 1723—24 թթ. վականներին Երուսաղէմում նկարել է նաև 23 կտոր մեծածավալ սրբապատկերներ: Սրանցից բացի նա հին Կահիրեում ունի նաև երկու նկար ևս, որոնք ներկայացնում են Աստվածամայրը (Կարիյատ էր-Ռիհա-

²² Գ. կթղ. Հովսեփյանի նշված հոդվածը, էջ 28:

²³ Տիգրան Հ. Թ. Սավալանյանց, Պատմություն Երուսաղեմի, Ներկրորդ հատոր, Երուսաղեմ, 1931, էջ 709:

²⁴ Գ. կթղ. Հովսեփյանի նշված հոդվածը, էջ 26:

²⁵ Նույն տեղում, էջ 27:

²⁶ Նույն տեղում, էջ 29:

²⁷ Onnig Avédissian, Peintres et sculpteurs Arméniens, Le Caire, 1959, page 122.

նիստի հարցի վերաբերյալ): Տիրացու Հովհաննեսի կենսագրության մասին բոլորովին ոչ մի տվյալ չունենք, բացի միայն իր տիրացու լինելը եկեղեցում, որի մասին նա գրել է միայն մի հիշատակարանում: Ուրեմն նա եղել է և՛ հայտնի ակարիչ, և՛ միևնույն ժամանակ եկեղեցու ամենահամեստ ապաստվոր, Երուսաղեմի հայոց ս. Հակոբ վանքում: Նա ամուսնացած է եղել շատ հավանաբար: Իր ծննդյան և մահվան թվերը պետք է որոնել 17-րդ դարի վերջին քառորդում և 18-րդի կեսերում: Թեպետև թվով շատ սակավ (ընդամենը 26 կտոր) կտավներ են հասել մեզ այսօր նրա վերանցից, շուրջ երկու և կես դար հետո, սակայն

իր այս 26 ակարները նույնիսկ պարզ կերպով ցույց են տալիս, որ մենք գործ ունենք սրբանկարային արվեստի մի հեղինակավոր ներկայացուցչի հետ, մի համեստ մարդ, որ չի մտածել իր անձի, անվան և փառքի մասին և միջնադարյան մեր բազմաթիվ հիանալի արվեստագետների նման, գլուխը կախած իր սիրած գործի վրա ստեղծագործել է արվեստի իսկական նմուշներ, հանդիսանալով այսպես 18-րդ դարի մեր արվեստի պատմության հայտնի ներկայացուցիչներից մեկը: Իր փառավոր վաստակով նա արժանի է մտնելու մեր մշակույթի պատմության հարուստ գանձարանում:

